ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ ՆԿԱՐԻՉՆԵՐԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ

Երևանի Նկարիչների Տանը բացվեց արտասահմանից հայրենիք վերադարձած հայ նկարիչների ստեղծագործությունների ցուցահանդես։

Ցուցահանդեսը բաց արեց Հայաստանի Նկարիչների Միության նախագահ, ժողովրդական նկարիչ ընկ. Մ. Սարյանը, որից հետո աղջուլնի ճառով հանդես եկավ ժողովրդական նկարիչ Գ. Գյուրջյանը։

Հայրենիք վերադարձած հայ նկարիչների անունից հանդես եկան Գ. Ահարոնյանը, Ա. Վարդանյանը և Ա. Պատոնյանը։ Նրանք իրենց արտաբուխ շնորհակալության խոսքն ուղղեցին սովետական կառավարությանը և ժողովուրդների մեծ առաջնորդ ընկեր Ստալինին, որի հայրական հոգատարության շնորհիվ դարերով տանջված հայ ժողովուրդը վերադառնում է իր հայրենի երկիրը և ստանում ազատ ու երջանիկ ստեղծագործական կյանքի անսահմանափակ հնարավորություն։

Ցուցահանդեսի բացմանը ներկա էին Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Ներդաղթի Կոմիտեի նախագահ ընկ. Բ. Աստվածատրյանը, գրողներ, արվեստագետներ և ուրիշներ։

AVANGARD | May 5, 1947